Հարգելի Արեն, բարև Ձեզ, պատասխանում եմ Ձեր երեք հարցերին՝

1.

Ես, Արմեն Սահակի Քոլոյանս, ծնվել եմ Երևանում, 1957 թվականի մարտի 28-ին: 1974 թվականին ավարտել եմ Ն. Ստեփանյանի անվան դպրոցը: Բարձրագույն կրթությունը ստացել եմ Մոսկվայի Վ. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտում (մանկական հոգեբանություն, դեֆեկտոլոգիա և լոգոպեդիա), որն ավարտել եմ 1979 թվականին: Վերադառնալով Հայաստան, աշխատել եմ Ղազարոս Աղայանի անվան թիվ 63 դպրոցում որպես մանկական հոգեբան և լոգոպեդ: 1980-ականներին աշխատել եմ Երևանում հրատարակվող «Կոմսոմոլեց» ռուսալեզու թերթում որպես սրբագրիչ, ապա թղթակից: Աշխատել եմ Հայաստանի հեռուստառադիոյի պետական կոմիտեում որպես ռեժիսորի ասիստենտ և ռեժիսոր՝ հեռուստատեսության ուսումնական և գիտահանրամատչելի հաղորդումների խմբագրությունում: Թղթակցել եմ մի շարք լրատվամիջոցների, 1991 թվականից աշխատել եմ որպես լրագրող ՀՅԴ մամուլի և տեղեկատվական կենտրոնում, 1992 թվականից միաժամանակ թղթակցել եմ «Ազատություն» ռադիոկայանի նախ ռուսական, ապա հայկական ծառայությանը: 1993 թվականից սկսել եմ աշխատանքն «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունում՝ Մյունխենի կենտրոնակայանում: 1995 թվականին ամբողջ «Ազատության» թիմով տեղափոխվել եմ Պրահա, որտեղ աշխատել եմ մինչև 2024-ի հուլիս: 2024-ի օգոստոսին վերադարձել եմ Երևան, որտեղ ստանձնել եմ Հանրային ռադիոյի տնօրենի պաշտոնը:

2.

Հայաստանի Հանրային ռադիոյում չկա գլխավոր խմբագրի հաստիք:

3.

Հայաստանի հանրային ռադիոյում այս պահին կա 285 հաստիքով աշխատող, բացի այդ, ունենք քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող մոտ երկու տասնյակ հեղինակներ:

Եթե լինեն նոր հարցեր՝ սիրով կպատասխանեմ:

Սիրով կմասնակցեմ հոկտեմբերի վերջին կայանալիք միջոցառմանը, միայն թե հիշեցրեք:

Հարգանքով,

Արմեն Քոլոյան

«Հայաստանի հանրահային ռադիոընկերություն» ՓԲԸ գործադիր տնօրեն